Պարույր Սևակ

Մայրը

Կանգնել է մայրը սեղանի առաջ:
(Ի՜նչ ծանրություն են ուսերը կրել)...
Աշխարհի խղճի կերպարանքն առած,
Աշխարհի ազնիվ Կոչին ընդառաջ,
Կանգնել, ուզում է ստորագրել:
Կանգնել է: Մենա՞կ: Ոչ, նրա կողքին,
Ասես կենդանի, հարություն առած,
Կանգնել են նրա զավակներն անգին.
Հառնել է նրանց հաղթական ոգին
Ու կանգնել մոր մոտ, սեղանի առաջ:
Կանգնել են ռազմի հին հանդերձանքով,
Աստիճաններով, տարիքով տարբեր,
Բայց սրտերը լի նույն երազանքով,
Կիսատ մնացած, բայց անմեռ կյանքով
Եվ սիրով, որով դեռ չէին հարբել:
Կանգնել են մոր մոտ ո՛չ իբրև ոգի,
Ո՛չ իբրև տեսիլ անդրշիրմական:
Միայն մայրը չէ զգում իր կողքին.
Տեսանելի են նրանք ամենքի՜ն,
Նրա՛նք, որ ընկան,
և չկա՛ն,

և կա՛ն:
Ու երբ որ մայրն է ստորագրրում,
Իզուր չի թվում, թե նույն այդ Կոչին
Իրենց անունն են նրա հետ գրում
Եվ որդիները - արյա՜մբ են գրում,
Որ թափված արյունն իզուր չկորչի...

29.XI.1951թ.
Մոսկվա